միայն մարդը կարող է նրանց չարությունն ուղղել իրեն թշնամու կամ որևէ առարկայի վրա։

Քաշկէրի թիվն անհաշիվ մեծ է։ Նրանք հատուկ անուններ չունեն և չեն ապրում հատկապես մի վայրում։ Նրանց մի տեսակը, որը մանավանդ հակառակ է ծննդկանին, կոչվում է խապըպռուշ։ Նրանցից ամեն մեկը չուներ իր հատուկ մշտական մնալու վայրը։ Նրանք ապրում էին խմբովին, քերծերում, աղբյուրների մոտ, առհասարակ ջրերի մեջ, մասնավորապես ջրաղացների տակ, ուր նրանց ձգում էր ջրի հոսանքը, նույնիսկ տաշտի ջրի մեջ, որտեղ երեխային լողացնում էին, ապրում էին մի թաս ջրի մեջ, որը մարդը խմում է։ Նրանք վխտում էին մութ տեղերում, առավելապես գետնի երեսին, թե՛ տան մեջ և թե՛ դուրսը։ Քաշկէրին[105] սովորաբար պատկերում էին մարդակերպ, մեծ մասամբ կանանց կերպարանքով, բայց նրանց մեջ կային և տղամարդիկ, նույնիսկ մանուկներ։ Կանայք սիրում էին շրջել հերարձակ, կամ մազերը հյուսած։ Իսկական մարդկանցից նրանք տարբերվում էին նրանով, որ նրանց ոտները թարս էին շրջված՝ կրունկներով առաջ, մատներով ետ։ Նրանց թողած հետքերը ցույց էին տալիս քայլվածքի հակառակ ուղղությունը։ Նրանք ամեն ինչ թարսացնում էին։ Տան մեջ նրանք բոլոր անկյուններումն էին։ Ցերեկվա լույսով նրանք շատ սակավ էին երևում, բայց հենց որ մթնում էր, իսկույն աշխուժանում էին, մանավանդ չորեքշաբթի օրը։ Չկար ոչ մի գյուղ, որտեղ պատմելիս չլինեին, որ իրենց գյուղում կամ հարևան գյուղում այս ինչ ընտանիքի ախոռում նկատել են, որ ձին գիշերը անհանգիստ էր անցկացրել, առավոտյան նրան քրտնած և բաշը հյուսած էին գտել[106]։ Գեչունց տան նօֆա̈րը՝ ծառան մի այդպիսի բան նկատելով, կօպր՝ կուպր է քսել մորթու վրա և մորթին կապել ձիու բաշին։ Առավոտյան տեսել էր, որ մի աղջիկ ձեռքերը կուպրած, մորթուն կպած, նստած՝ մնացել էր ձիու վրա։ Նրան բերում է տուն, աջ ձեռքին անց է կացնում պողպատե ալվէն՝ ապարանջանը, ձախ ձեռքի մատին պօղպատե մատանի։ Ուրիշ անգամներ պատմում են, թե աղջկա չորերի մեջ ցցել էին ասեղ։ Այնուհետև աղջիկը տան մեջ էր մնացել և ամեն հրաման կատարել, միայն թե միշտ պատվիրեն հակառակը։ Որպեսզի կուժով ջուր բերի, պետք էր պատվիրել՝

«Կուժը վերցրու և ջուրը թափիր»։

Երբ կասեին՝

«Աղբը տան մեջ հավաքիր, ավելը դուրս ձգիր»,

Իսկույն ավելը կվերցներ, հատակը լավ կավլեր, աղբը դուրս կհաներ, ավելն էլ տան մեջտեղ կդներ։ Այդպես նա ծառայել էր, մինչև որ մի խորամանկությամբ խաբել է, մեծ մասամբ երեխայի, մատանին, ապարանջանը, ասեղը վրայից հեռացնել է տվել և իսկույն անհետացել է։

Մթնում էր թե չէ՝ Քաշկէրը արթնանում էին։ Ուստի մթնելուց հետո գետնին չպետք էր տաք ջուր թափել, որպեսզի նրանց չբարկացնեն։

Եթե մթնելուց հետո տաք ջուր դուրս են տանում և թափում, պիտի զգուշացնես քաշկերին՝

---

105 Մեր ձեռքի տակ եղած նյութերին նայելով, Քաշկ անունն էին տալիս չար ոգիներին միայն այն գավառներում, որտեղ հայ ամուսնացած կինը քիթն ու բերանը կապում էր և տարին սկսում էին Նավասարդից։ Արևմտյան գավառներում ծանոթ չէր այդ անունը։ Այդտեղ ծանոթ չէին նաև Նավասարդի տոնին և տարին սկսում էին Կաղանդով։

106 Հմմտ. СМОМПК, вып. XIII, отд. I, էջ 112։